

### ՄԻՐՈՅ ՄԱՍԻՆ

Մեր առաջին պատուիրանն է, թեև կանոնական շարժով 12-րդ գլուխը կը կազմէ, սակայն ե՛լ հին օրէնքին մէջ՝ Մովսէսի, ե՛լ նորին մէջ՝ Քրիստոսի Աւետարանին, բոլոր պատուիրաններէն աւելի մեծն ու առաջինը կը համարուի: Օրէնքին մէջ գրուած է. «Տէր Աստուածդ պիտի սիրես քու ամբողջ սրտովդ, ամբողջ գորութեամբդ եւ ամբողջ մտքովդ» (Բ. Օրինաց 6.5), «եւ ընկերդ՝ անձիդ մման» (Ղեւտ. ԺԹ. 19): Ինչպէս, որ քու անձիդ չար բան չես ուզեր, նոյնպէս ընկերոջդ պէտք չէ փափաքիս եւ ինչպէս, որ քու անձիդ խնամք կը տանիս եւ բարին կը ցանկաս, նոյնպէս պէտք է ընկերոջդ ցանկաս, որովհետեւ ընկերոջ սէրը Աստուծոյ սիրոյն հաւասար է: Ահա, թէ ինչու Յովհաննէս աւետարանիչ կ'ըսէ. «Եթէ եղբայրդ, որ կը տեսնես եւ չես սիրեր, Աստուած՝ որ չես տեսներ ի՞նչպէս կրնաս սիրել» (Ա. Յովհ. 4. 20): Ան, որ կ'ըսէ, թէ կը սիրեմ գԱստուած, եւ եղբայրն ու ընկերը կ'ատէ, սուտ է որովհետեւ ան, որ մարդասէր չէ, նաեւ Աստուածասէր չէ:

Քրիստոս կ'ըսէ. «Միայն այն ատեն իմ աշակերտներս կ'ըլլաք եւ քրիստոնեաներ, երբ սիրէք զիրար: Ինչպէս, որ ես սիրեցի ձեզ, դուք եւս պարտիք սիրել զիրար» (Յովհաննէս 13.35): Քրիստոս ինքն այնպէս սիրեց մեզ, որ իր անձը մահուան մատնեց մեզի համար: Նոյնպէս իւրաքանչիւր քրիստոնեայ պէտք է իր անձը մահուան յանձնէ իր եղբոր, ընկերոջ եւ հաւատակիցին համար: Արդ, ի՞նչ պատասխան պիտի տան անոնք, որոնք սիրոյ փոխարէն կ'ատեն ու կը չարախօսեն, կը մատնեն ու կը զրկեն:

### ԾՆԾՂԱՅ



Եկեղեցական երաժշտութեան կշռոյթ տուող եւ միանգամայն տօնական օրերու դօղանջ եղող պղնձեայ ձայնային գործիք մըն է ծննդան:

Վաղ ժամանակներէն եկող, տափակ ու կլոր, նման է սկաւառակի, մէջտեղը՝ գոգաւոր, ուրկէ ամրացած կաշիէ օղակ մը, որպէս բռնիչ ծառայելով: Երբ իրար կը բախենք, զօրեղ զիլ ձայն մը կը դորդացնէ եկեղեցին, որպէս հաւատքի պոռթկում կը խանդավառէ հաւատացեալները, անոնց սրտերն ու հոգիները լեցնելով տօնական ցնձութեամբ:

Ծննդայի գործածութիւնը առկայ է նաեւ աշխարհիկ նուագախումբերուն մէջ, որ մերթ ընդ մերթ տիրապետող իր զնգոցով կը միջամտէ երաժշտական ներկայացումներուն, իր զօրեղ ձայնով ներգրաւելով երաժշտասէր հասարակութեան ուշքն ու ներաշխարհը...

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԲԵՂ ԽՄ ՈՏԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺՁ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2023 ԹԻԻ 44

### ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԵՆԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Իմաս. 14.1-8: Ես. 33.22-34.1: Ա. Կր. 1.18-24: Մտ. 24.27-36

### ՏՕՆ ԳԻՏՈՅ ԽԱԶԻՆ

### ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 24.27-36

Մարդու Որդին պիտի գայ կայծակի նման, որ երբ փայլատակէ՝ կը լուսաւորէ ամբողջ երկնակամարը՝ արեւելքէն արեւմուտք: Արժիւները կը հաւարուին հոն՝ ուր դիակ կայ:

Նեղութեան այդ օրերէն անմիջապէս ետք արեւը պիտի խաւարի եւ լուսինը այլեւս պիտի չփայլի: Երկինքէն աստղերը պիտի իյնան եւ երկնային մարմինները պիտի սասանին: Ահա մարդու Որդին նշանը պիտի երեւի երկինքի մէջ եւ աշխարհի բոլոր ժողովուրդները պիտի ողբան, երբ տեսնեն մարդու Որդին, որ կու գայ երկինքի ամպերուն վրայ բազմած զօրութեամբ եւ մեծ փառքով: Երբ մեծաձայն փողը հնչէ, ան իր հրեշտակները պիտի դրկէ, որպէսզի հաւաքեն իր ընտրեալները աշխարհի չորս կողմերէն, երկինքի մէկ ծայրէն մինչեւ միւսը: Թ՛զենին թող ձեզի օրինակ ըլլայ: Երբ տեսնէք, որ անոր ճիւղերը կը կակուղնան եւ տերեւ կ'արձակեն գիտէք, թէ ամառը մօտ է: Նոյնպէս այլ, երբ բոլոր ըսածներս կատարուին գիտցէք, թէ մարդու Որդին գալուստը մօտ է: Վստահ եղէ՛ք, որ այս սերունդը չանցած՝ ասոնք բոլորը պիտի պատահին: Նոյնիսկ, եթէ երկինքն ու երկիրը անհետանան, խօսքերս պիտի չանհետանան:

«Քրիստոսի հետ խաչին վրայ մեռայ եւ այլեւս կենդանի եմ: Ես չէ, որ կ'ապրիմ այլ՝ Քրիստոս է, որ կ'ապրի իմ մէջս» (Գաղատացիներու 2-20): Քրիստոս յաւիտենական կեանքի դուռը բացաւ մեր առջեւ իր մահուամբը խաչին վրայ: Առանց մեր Տիրոջ մահուան ու յարուլթեան, մենք պիտի չկրնայինք յարուլթիւն առնել դէպի նոր կեանքը եւ նոր կեանքին համար: Քրիստոսի յարուլթեան օրինակը մեր վրայ առնելու համար, բացարձակ պայման է անոր մահուան օրինակը նաեւ առնելու մեր վրայ: «Քրիստոսի հետ խաչին վրայ» չմեռնողը, Քրիստոսով ու Քրիստոսի համար յարուլթիւն չի կրնար առնել: Սիրելի՛ ընթերցող, դուք մեռա՞ծ ես աշխարհի համար: Մեռցուցա՞ծ ես խաչին վրայ մարմինդ իր բոլոր ցանկութիւններով: Եթէ մեռցուցած ես, ուրեմն, «Քրիստոս է, որ կ'ապրի» մէջդ:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ**

**ՏՕՆ ԳԻՒՏՈՅ ԽԱԶԻՆ**



Քրիստոնեական տօներուն մէջ յատուկ տեղ կը գրաւէ գիւտ խաչի տօնը: 313 թուին, Միլանոյի հրովարտակով, երբ քրիստոնեաներուն արտօնուեցաւ ազատօրէն պաշտել նոր կրօնը՝ քրիստոնեութիւնը, Երուսաղէմը դարձաւ քրիստոնեաներուն ուխտավայրը: Աշխարհի չորս կողմէն քրիստոնեաներ ուխտի կ'երթային Երուսաղէմ:

327 թուականին, այս ուխտաւորներուն մէջն էր նաեւ Կոստանդիանոս Կայսեր մայրը՝ Հեղինէ թագուհին: Ան կ'ուզէր գտնել Յիսուսի խաչափայտը, որ կորսուած էր: Ուստի ան բարձրացաւ Գողգոթա լեռը: Այդ ժամանակ Գողգոթան կը գործածուէր իբրեւ աղբատեղի:

Հեղինէ թագուհին պեղել տուաւ այն տեղը, ուր կ'ենթադրէին գտնել Յիսուսի խաչափայտը: Անոր ենթադրութիւնը ճիշդ դուրս եկաւ եւ փորուած տեղէն ի յայտ եկան երեք խաչափայտեր:

Գիտնալու համար, թէ ո՞րն է Յիսուսի խաչափայտը, իւրաքանչիւրը առանձնաբար դրին մեռած մանուկի մը դիակին վրայ: Երբ Յիսուսի խաչափայտը մօտեցուցին մանուկին, ան յարութիւն առաւ: Այսպիսով գիտցան Յիսուսի խաչափայտը, որ հետագային փոքր մասերու վերածելով բաժնեցին եկեղեցիներուն:

Մեր Եկեղեցին այս տօնը կը յիշատակէ Խաչվերացի եօթներորդ Կիրակին, այսինքն՝ Հոկտեմբեր 23-29-ի միջեւ:

Այս տարի, Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն Գիւտ Խաչի տօնը կը զուգադիպի Կիրակի՝ 29 Հոկտեմբերին:

Նշեմք որ Լիբանանի թեմէն ներս Գիւտ Խաչի տօնը, նաեւ կը զուգադիպի Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին: Ամէն տարի հանդիսաւոր Ս. Պատարագ կը մատուցուի եւ ապա աւանդական մատաղի օրհնութիւնը տեղի կ'ունենայ նախագահութեամբ Թեմի Առաջնորդ Սրբազանին :

**ՀԱՐԿՈՒՄ ԴԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ**

Կրնա՞ք մեզի բացատրել հայկական Խաչի ձեւին մասին

**Այո, Հայկական Խաչը միշտ դատարկ կը ներկայացուի եւ անոր վրայ չենք հանդիպիր խաչուած Քրիստոսին: Ինչո՞ւ: Որովհետեւ այդպիսով մարդիկ ուզած են խորհրդանշել Քրիստոսի յաղթանակը մահուան առջեւ:**

Հայկական խաչերը երբեմն կը ներկայացուին զարդարուած, խաղաղ, տերեւներով եւ ցորենի հասկերով: Աստուք կը խորհրդանշեն կեանքը, որ ծնունդ կ'առնէ խաչէն, որ այլապէս մահուան ծառայող գործիք մըն էր:

**Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Տ Գ Ա Մ**

**ՊՍՏՈՒԾՈՅ ՄՕՏԻԿ ԵՂՈՂ ՄԱՐԿԸ՝ ՄԱՐԿՈՅ ԱՆ ՄՕՏԻԿ ՊԷՏԷ Է ԸԼԼԱՅ**

Ղեւտացի մըն ալ նոյն տեղէն անցնելու ատեն տեսաւ վիրաւորը եւ ինքն ալ շրջանցեց գնաց (Ղկ. 10.32): Ո՞վ էր Ղեւտացին եւ ի՞նչ էր իր պաշտօնը: Ղեւտացին տաճարին մօտիկ անձն էր: Վկայութեան Խորանին, Ուխտի Տապանակին եւ հետագային, տաճարին պահպանութիւնը կատարելու կոչուած անձն էր: Ան նոյնիսկ ժողովուրդին պահպանութիւնը կատարելու կոչուած մէկն էր (Թւ. 3.5-8): Ահաւասիկ այսպիսի մէկն էր, որ տեսաւ վիրաւոր մարդը գետին ինկած եւ շրջանցեց գնաց: Ան կոչուած էր պահպանելու իր եղբայրը բայց տէր չկեցաւ իր կոչումին: Ան մօտիկ էր տաճարին, բայց հեռու էր տաճար ըլլալու կոչուած մարդոցմէն: Ան մօտիկ էր տաճարին, բայց հեռու էր Աստուծմէ:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼ Ի Ք Հ Ո Գ Ե Ի Ո Ր Դ Ա Մ**

Անկասկած, որ մենք եւս մօտիկ ենք Աստուծոյ, բայց հարց կու տամ, մօտի՞կ ենք նաեւ մարդոց: Մօտիկ ենք եկեղեցւոյ, բայց մօտի՞կ ենք նաեւ աղքատին ու որբին: Կը յաճախենք եկեղեցի, բայց կը յաճախենք նաեւ անտեսուած եւ մոռցուած մարդոց տուները:

**ԱՍՏՈՒԱԾ ՄԵՁԻ ՎԵՏ ԸԼԼԱՅ**

**ԵՅԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...**

**ԵՐԷ ՍԻՐՏԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՀՆՆՎԷՊ ԵՐԱՍՏԱԳԻՏՈՒԹԵԱՄՍԲ ԼԵՅՈՒՆ Է ԵՒ Կ՛ՈՒԶԵՍ ԶԻՆԷ ԳՈՂԱՔԱՆԵԼ, Կարդա՛ր՝ ՍԱՂՄՈՍ 40**

Համբերութեամբ սպասեցի Տիրոջ, եւ ան եկաւ օգնութեան, լսեց իմ աղաչանքս: Զիս դուրս հանեց տառապանքի գուրէն ու նահիճէն, ժայռի վրայ կանգնեցուց, ամրապնդեց քայլերս եւ շրթներուս վրայ դրաւ նոր երգ մը, օրհնութեան երգ՝ մեր Աստուծոյն: Շատեր պիտի տեսնեն եւ ահով լեցուին, եւ Տիրոջ պիտի վստահին: Երանի՛ այն մարդուն, որ Տիրոջ կը վստահի, եւ չի կոթնիր սուտ աստուածներուն, ո՛չ ալ անոնց՝ որոնք ստութեան կը հետեւին: Ի՛նչ հրաշալի են գործերը, որ ըրիր մեզի համար, Ո՞վ Տէր, Աստուածս, եւ քու ծրագիրներդ, որ մեզի համար պատրաստեցիր: Զկայ մէկը քեզի նման: Պիտի ուզէի հոչակել ու պատմել գանոնք, բայց ա՛յնքան շատ են ու անթիւ: Զոհ եւ ընծայ չկամեցար, ողջակէզ կամ մեղքի համար գոհ չպահանջեցիր, այլ՝ ականջներս բացիր, որ քեզ լսեմ: Եւ ես ըսի.՝ «Ահա կու գամ, ինչպէս գիրքի գալարին մէջ գրուած է ինձի համար: Ի՛նչքան կ'ուզեմ եւ քու կամքդ կատարել, ո՞վ Աստուած, օրէնքդ իմ սրտիս մէջ է: Քու ժողովուրդիդ հաւաքոյթին մէջ փրկութիւնդ աւետեցի, եւ դուն գիտես, Տէ՛ր, թէ ես բնաւ պիտի չդադրիմ՝ գայն պատմել: Արդարութիւնդ սրտիս մէջ ծածկած չպահեցի, հաւատարմութեանդ եւ փրկութեանդ մասին խօսեցայ միշտ, եւ ժողովուրդիդ հաւաքոյթին մէջ վկայեցի քու սիրոյդ եւ հաւատարմութեանդ մասին: Ուստի դուն, Տէ՛ր, գթութիւնդ մի զլանար ինձի: Քու սէրդ եւ ողորմութիւնդ թող տեսարար պահապանեն զիս: ԱՄԷՆ: